ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի որոշում 2020թ. փետրվարի 26-ի N6 նիստի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՄՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՔՊ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ՝ ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ՔՊ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ» գործունեության կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի նախագահ՝ Է.Գ.Գասպարյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի քաղաքացիական պաշտպանության շտաբի պետի (այսուհետ ՔՊ շտաբի պետ)աշխատանքային գործունեության

Ընդհանուր դրույթներ

Սույն կանոնակարգով ուղղորդվում և սահմանվում է քոլեջի ՔՊ շտաբի պետի աշխատանքային ընթացակարգը: Կանոնակարգի համար հիմք են հանդիսանում ՀՀ օրենքը «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին հոդված 17 կետ Բ», ՀՀ կառավարության (26.08.2010թ N 11 02-ՆԳ; 22.01.2015թ N 46-Ն; 13.11.2003թN15 32-Ն) որոշումները, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի (այսուհետ քոլեջի քաղաքացիական պաշտպանության պետ) հաստատած քաղաքացիական պաշտպանության ուսումնավաժանքների գրաֆիկ ժամանակացույցը:

ՔՊ շտաբի պետը՝

1. Քոլեջի ՔՊ պետի ղեկավարությամբ ստեղծում է քաղաքացիական պաշտպանության կազմավորման շտաբի հանձնաժողով և խմբեր:
2. Կազմում է շտաբային, օբյեկտային, համալիր ուսումնավարժությունների պլաններ և ներկայացնում է քոլեջի ՔՊ պետի հաստատմանը:
3. ՔՊ պետի հրահանգով մասնակցում է ՔՊ միջոցառումների ղեկավարման, կազմակերպման և իրականացման աշխատանքներին:
4. Քոլեջում իրականացվող ՔՊ միջոցառումների ժամանակ՝ ՔՊ պետին ներկայացնում է կատարվող ուսումնական փրկարարական, բժշկական վթարավերականգնողական աշխատանքների վերլուծական գնահատականները:
5. Քոլեջի դասախոսական կազմի, ուսանողների և սպասարկող օժանդակ անձնակազմի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում իրականացնումէ ուսուցում՝

ա. իրավունքների, պարտականությունների և վարվելակերպի մասին ուսուցումը

բ. պաշտպանության միջոցներից օգտվելու կանոնների մասին ուսուցումը.

գ. արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքների կատարման հիմունքների ուսուցումը.

դ. քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման հիմունքների ուսուցումը.

ե. տուժածներին առաջին բուժօգնություն ցուցաբերելու եղանակների ուսուցումը.

զ. փրկարարական, վթարային - փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, հրդեհաշիջման աշխատանքների կատարման հիմունքների ուսուցումը:

6. Շտաբային, օբյեկտային և համալիր ուսումնավարժանքների շրջանակներում համագործակցում է ՀՀ ԱԻՆ Արարատի ՄՓՎ ՃԿԿ-ի հետ:

ՔՊ շտաբի պետ՝ Տ. Բաբայան